

Ոչ պարտադիր փոփոխական և հաստատուն գործոններ Ընթացիկ ակտիվներ

Ընթացիկ ակտիվների համար կապիտալի պահանջներ

Ընթացիկ ակտիվները (սերմեր, պարարտանյութ, թունաքիմիկատներ, հումք և նյութեր և այլն) կիրառվում են արտադրության ընթացքում, հետևապես ունեն օգտագործման տարբեր ժամկետներ:

Ընթացիկ ակտիվները չեն մաշվում, դրանք օգտագործվում են արտադրական մեկ գործընթացում և չեն սպառվում, քանի որ օգտագործված կապիտալը բաշխումից կամ այլ օգտագործումից հետո ամբողջությամբ հետ չի վերադառնում (սովորաբար միևնույն արտադրական գործընթացում):

Բուսաբուծության ճյուղում ընթացիկ ակտիվների գծով անհրաժեշտ կապիտալի միջին պահանջի որոշման ժամանակ գործնական հաշվարկներում գարնանացան և աշնանացան մշակաբույսերի դեպքում սովորաբար նախատեսվում է փոփոխուն հատուկ ծախսերի (նյութեր և ծառայություններ) փոփոխություններ՝ համապատասխանաբար՝ 50 և 60%-ի չափով:

Օրինակ 2-ում ներկայացված ընթացիկ ակտիվների նկատմամբ կապիտալի պահանջի հաշվարկում դրանք ավելանում են մուտքերի աճին համապատասխան:

Ընթացիկ ակտիվների ծախսեր

Ընթացիկ ակտիվների արժեքը հաշվարկվում է կամ տոկոսավճարների ձևով կամ այլընտրանքային ծախսերի ձևով:

Այս ծախսերը կարելի է համարել «թաքնված ծախսեր»:

Թաքնված ծախսերը ներառում են.

- Սեփական կապիտալի օգտագործման ծախսեր (այլընտրանքային ծախսեր) = թաքնված ծախսեր
- Փոխառու կապիտալի օգտագործման արժեքը = տոկոսավճարներ

Փոխառու կապիտալի ներդրումն արտացոլում է գործող վարկային պայմանագրի արդյունավետությունը: Սեփական կապիտալի գծով այլընտրանքային ծախսերը հիմնված են կապիտալի ներգրավման հնարավոր տոկոսավճարների վրա, երբ այն օգտագործվում է այլընտրանքային ուղղություններով (նաև ֆերմերային տնտեսությունում): Կարճաժամկետ և միջնաժամկետ ֆինանսական ներդրման համար հիմնականում, հիմք է ընդունվում բանկի տոկոսագումարը:

Ծախսերը (արտահայտված համապատասխան նորմատիվային ուղղություններով) կարող են հստակորեն որոշվել ֆերմայի մակարդակով, այնքանով որքանով դրանց վրա ազդում են կապիտալի նկատմամբ ֆերմերային տնտեսության ընդհանուր պահանջները:

Երբ թաքնված ծախսերն արդեն ներառվել են համախառն եկամտի հաշվարկում, ապա դրանք պետք է հետ հաշվարկվեն համախառն եկամտի մեջ՝ ամբողջ ֆերմայի արդյունավետության ցուցանիշների հաշվարկման համար, քանի որ, օրինակ, ավելացված արժեքը ներառում է ընդհանուր կապիտալի հատույցը, իսկ շահույթը ներառում է սեփական կապիտալի հատույցը:

Օրինակը ներկայացված է համախառն եկամտի որոշման համար գործնականում կիրառվող հաշվարկում:

Հետևապես, ընթացիկ ակտիվների նկատմամբ կապիտալի պահանջը հաշվի է առնվում, սակայն որպես ծախսային գործոն հաշվի չի առնվում (համեմատեք Գլուխ 5.1-ը):

Օրինակում, համարժեք նպատակային տոկոսադրույքները, տարբերակված են ըստ

Սեփական և փոխառու կապիտալի, ենթադրում են

-Սեփական կապիտալ 5% (Գերմանիայի համար) և 8% (Հայաստանի համար)

-Փոխառու կապիտալ`7% (Գերմանիայի համար) և 16% (Հայաստանի համար)

Հաշվարկները ցույց են տալիս, որ Գերմանիայի պարագայում ընթացիկ ակտիվների արժեքը կազմում է 15.9 Եվրո, իսկ Հայաստանի պարագայում` 23.56 Եվրո: